

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին

ԳԼՈՒԽ 54. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հոդված 983. Պարտադիր և կամավոր ապահովագրություն

1. Ապահովագրությունն իրականացվում է ապահովագրող կազմակերպության (ապահովագրողի) հետ քաղաքացու կամ իրավաբանական անձի (ապահովագրվողի) կնքած գույքային կամ անձնական ապահովագրության պայմանագրի հիման վրա:

2. Անձնական ապահովագրության պայմանագիրը հրապարակային պայմանագիր է (հոդված 442):

3. Այն դեպքերում, երբ որոշակի անձանց վրա օրենքով պարտականություն է դրվում՝ որպես ապահովագրվողներ իրենց կամ շահագրգիռ անձանց հաշվին ապահովագրել այլ անձանց կյանքը և առողջությունը կամ գույքը կամ այլ անձանց հանդեպ ունեցած իրենց քաղաքացիական պատասխանատվությունը (պարտադիր ապահովագրություն), ապահովագրությունն իրականացվում է սույն գլխի կանոններին համապատասխան պայմանագիր կնքելու միջոցով: Ապահովագրողների համար ապահովագրվողների առաջարկած պայմաններով ապահովագրական պայմանագիր կնքելը պարտադիր չէ:

4. Օրենքով կարող են նախատեսվել պետական բյուջեից հատկացվող միջոցների հաշվին քաղաքացիների կյանքի, առողջության և գույքի պարտադիր ապահովագրության դեպքեր (պարտադիր պետական ապահովագրություն):

Հոդված 984. Շահեր, որոնց ապահովագրությունը չի թույլատրվում

1. Չի թույլատրվում՝

1) հակաօրինական շահերի ապահովագրությունը.

2) խաղերին, վիճակախաղերին և գրազին մասնակցելու հետևանքով առաջացած վնասների ապահովագրությունը:

2. Սույն հոդվածի 1-ին կետին հակասող՝ ապահովագրության պայմանագրի պայմաններն առոչինչ են:

Հոդված 985. Գույքային ապահովագրության պայմանագիր

1. Գույքային ապահովագրության պայմանագրով՝ մի կողմը (ապահովագրողը) պարտավորվում է պայմանագրով պայմանավորված վճարի (ապահովագրական պարգևի) դիմաց, պայմանագրով նախատեսված դեպքը (ապահովագրական դեպքը) վրա հասնելիս, մյուս կողմին (ապահովագրվողին) կամ այլ անձի, ում օգտին կնքվել է պայմանագիրը (շահառուին) հատուցել ապահովագրված գույքին այդ դեպքի հետևանքով պատճառված կամ ապահովագրվողի այլ գույքային շահերի հետ կապված վնասները (ապահովագրական հատուցումը)՝ պայմանագրով որոշված գումարի (ապահովագրական գումարի) սահմաններում:

2. Գույքային ապահովագրության պայմանագրով կարող են, մասնավորապես, ապահովագրվել հետևյալ գույքային շահերը՝

1) որոշակի գույքի կորստի, պակասորդի կամ վնասվածքի ռիսկը (հոդված 986).

2) այլ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններով պատասխանատվության, իսկ օրենքով

նախատեսված դեպքերում՝ նաև պայմանագրերով քաղաքացիական պատասխանատվության ռիսկը (987 և 988 հոդվածներ)։

3) ձեռնարկատիրոջ կոնտրագենտների կողմից իրենց պարտավորությունների խախտմամբ նրա ձեռնարկատիրական գործունեությանը պատճառած կամ ձեռնարկատիրոջից անկախ հանգամանքներով այդ գործունեության պայմանները փոփոխվելու հետևանքով ծագած վնասների ռիսկը՝ ներառյալ սպասվելիք եկամուտները չստանալու ձեռնարկատիրական ռիսկը (հոդված 989)։

Հոդված 986. Գույքի ապահովագրություն

1. Գույքը կարող է ապահովագրության պայմանագրով ապահովագրվել հոգուտ այն անձի (ապահովագրվողի կամ շահառուի), ով օրենքի, այլ իրավական ակտի կամ պայմանագրի հիման վրա այդ գույքի պահպանման շահ ունի։

2. Ապահովագրողի կամ շահառուի մոտ ապահովագրված գույքի պահպանման նկատմամբ շահագրգռվածության բացակայության դեպքում կնքված գույքի ապահովագրության պայմանագիրն անվավեր է։

3. Շահառուի օգտին գույքի ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել առանց շահառուի անունը կամ անվանումը նշելու։

Նման պայմանագիր կնքելիս ապահովագրվողին տրվում է ըստ ներկայացնողի ապահովագրական պոլիսը։ Ապահովագրվողի կամ շահառուի կողմից այդպիսի պայմանագրով իրավունք իրականացնելիս այդ պոլիսը ներկայացվում է ապահովագրողին։

Հոդված 987. Վնաս պատճառելու համար պատասխանատվության ապահովագրություն

1. Այլ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու հետևանքով ծագող պարտավորություններով պատասխանատվության ռիսկի ապահովագրության պայմանագրով կարող է ապահովագրվել հենց ապահովագրվողի կամ այլ անձի, որի վրա կարող է նման պատասխանատվություն դրվել, պատասխանատվության ռիսկը։

2. Անձը, ում կողմից պատճառված վնասի համար պատասխանատվության ռիսկն ապահովագրվել է, պետք է նշվի ապահովագրության պայմանագրում։ Եթե այդ անձը պայմանագրում նշված չէ, ապահովագրված է համարվում ապահովագրվողի պատասխանատվության ռիսկը։

3. Պատճառված վնասի համար պատասխանատվության ռիսկի ապահովագրության պայմանագիրը համարվում է կնքված՝ հոգուտ այն անձանց, որոնց կարող է վնաս պատճառվել (հոգուտ շահառուների), եթե անգամ պայմանագիրը կնքվել է հոգուտ ապահովագրվողի կամ պատճառված վնասի համար պատասխանատվություն կրող այլ անձի կամ պայմանագրում նշված չէ, թե ում օգտին է այն կնքվել։

4. Այն դեպքում, երբ պատճառված վնասի համար պատասխանատվությունն ապահովագրվել է ապահովագրության պարտադիր լինելու ուժով, ինչպես նաև օրենքով կամ ապահովագրության պայմանագրով այդպիսի պատասխանատվություն նախատեսող այլ դեպքերում, անձը, ում օգտին ապահովագրության պայմանագիրը համարվում է կնքված, իրավունք ունի ապահովագրված գումարի սահմաններում անմիջականորեն ապահովագրողից պահանջել հատուցելու պատճառված վնասը։

Հոդված 988. Պայմանագրով պատասխանատվության ապահովագրությունը

1. Պայմանագրի խախտման համար պատասխանատվության ռիսկի ապահովագրություն թույլատրվում է օրենքով նախատեսված դեպքերում։

2. Պայմանագրի խախտման համար պատասխանատվության ռիսկի ապահովագրության պայմանագրով կարող է ապահովագրվել միայն ապահովագրվողի

սպատասխանատվության ռիսկը: Այս պահանջին չհամապատասխանող ապահովագրության պայմանագիրն առոչինչ է:

3. Պայմանագրի խախտման համար սպատասխանատվության ռիսկն ապահովագրված է համարվում հոգուտ այն կողմի, որի առջև այդ պայմանագրի պայմաններով ապահովագրվողը պետք է համապատասխան սպատասխանատվություն կրի (շահառուի), եթե անգամ ապահովագրության պայմանագիրը կնքվել է հոգուտ այլ անձի կամ նրանում նշված չէ, թե ում օգտին է այն կնքվել:

Հոդված 989. Ձեռնարկատիրական ռիսկի ապահովագրությունը

1. Ձեռնարկատիրական ռիսկի ապահովագրության պայմանագրով կարող է ապահովագրվել միայն ապահովագրվողի ձեռնարկատիրական ռիսկը և միայն նրա օգտին:

2. Ապահովագրվող չհամարվող անձի ձեռնարկատիրական ռիսկի ապահովագրության պայմանագիրն առոչինչ է:

3. Հոգուտ ապահովագրվող չհամարվող անձի ձեռնարկատիրական ռիսկի ապահովագրության պայմանագիրը կնքված է համարվում հոգուտ ապահովագրվողի:

Հոդված 990. Անձնական ապահովագրության պայմանագիր

1. Անձնական ապահովագրության պայմանագրով՝ մի կողմը (ապահովագրողը) պարտավորվում է, մյուս կողմի (ապահովագրվողի)՝ պայմանագրով պայմանավորված վճարի (ապահովագրական պարգևի) դիմաց, միանվագ կամ պարբերաբար վճարել պայմանագրով պայմանավորված գումարը (ապահովագրական գումարը) ապահովագրվողի կամ պայմանագրում նշված այլ քաղաքացու (ապահովագրված անձի) կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու, նրա որոշակի տարիքի հասնելու կամ նրա կյանքում պայմանագրով նախատեսված այլ իրադարձության (ապահովագրական դեպքի) երևան գալու դեպքերում:

Ապահովագրական գումար ստանալու իրավունք ունի այն անձը, ում օգտին պայմանագիրը կնքվել է:

2. Անձնական ապահովագրության պայմանագիրը կնքված է համարվում հոգուտ ապահովագրվող անձի, եթե պայմանագրում այլ անձ նշված չէ որպես շահառու: Պայմանագրով, որում որպես շահառու այլ անձ նշված չէ, ապահովագրված անձի մահվան դեպքում շահառուներ են ճանաչվում ապահովագրված անձի ժառանգները:

3. Հոգուտ ապահովագրված անձ չհամարվող անձի անձնական ապահովագրության պայմանագիրը՝ ներառյալ հոգուտ ապահովագրված անձ չհամարվող ապահովագրվողի, կարող է կնքվել միայն ապահովագրված անձի գրավոր համաձայնությամբ: Այդպիսի համաձայնության բացակայության դեպքում ապահովագրված անձի, իսկապի ապահովագրված անձի մահվան դեպքում՝ նրա ժառանգների հայցով՝ պայմանագիրը կարող է ճանաչվել անվավեր:

Հոդված 991. Պարտադիր ապահովագրություն

1. Օրենքում նշված անձանց վրա կարող է պարտականություն դրվել ապահովագրելու՝

1) օրենքով սահմանված այլ անձանց կյանքը, առողջությունը կամ գույքը՝ նրանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառվելու դեպքերում.

2) իր քաղաքացիական պատասխանատվության ռիսկը, որը կարող է վրա հասնել այլ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու կամ այլ անձանց հետ կնքված պայմանագիրը խախտելու հետևանքով:

2. Օրենքը չի կարող սահմանել իր կյանքը և առողջությունը ապահովագրելու քաղաքացու պարտականությունը:

3. Այն դեպքերում, երբ ապահովագրության պարտականությունը չի բխում օրենքից, այլ հիմնված է պայմանագրի վրա՝ ներառյալ գույքի ապահովագրության

պարտականությունը գույքի տիրոջ հետ պայմանագրի կամ գույքի սեփականատեր համարվող իրավաբանական անձի կանոնադրության վրա, այդպիսի ապահովագրությունը սույն հոդվածի տեսանկյունից պարտադիր չէ և չի առաջացնում սույն օրենսգրքի 993 հոդվածով նախատեսված հետևանքները:

Հոդված 992. Պարտադիր ապահովագրություն իրականացնելը

1. Պարտադիր ապահովագրությունն ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքելու միջոցով իրականացնում է այն անձը (ապահովագրվողը), ում վրա դրված է այդպիսի ապահովագրության պարտականությունը:

2. Պարտադիր ապահովագրությունն իրականացվում է ապահովագրվողի հաշվին, բացառությամբ ուղևորների պարտադիր ապահովագրության, որն օրենքով նախատեսված դեպքերում կարող է իրականացվել նրանց հաշվին:

3. Պարտադիր ապահովագրության ենթակա օբյեկտները, այն ռիսկերը, որոնցից դրանք պետք է ապահովագրվեն, և ապահովագրական գումարների նվազագույն չափերը սահմանվում են օրենքով:

Հոդված 993. Պարտադիր ապահովագրության մասին կանոնները խախտելու հետևանքները

1. Եթե անձին, հոգուտ որի օրենքով պետք է պարտադիր ապահովագրություն իրականացվի, հայտնի է դարձել, որ ապահովագրություն չի իրականացվել, նա իրավունք ունի դատական կարգով պահանջել, որ դա իրականացվի այն անձի կողմից, ում վրա դրված է ապահովագրության պարտականությունը:

2. Եթե անձը, ում վրա դրված է ապահովագրության պարտականությունը, չի իրականացրել այն կամ ապահովագրության պայմանագիրը կնքել է օրենքով սահմանված պայմանների համեմատությամբ շահառուի դրությունը վատթարացնող պայմաններով, ապա ապահովագրական դեպքը վրա հասնելու դեպքում նա շահառուի առջև պատասխանատվություն է կրում այն պայմաններով, որոնցով պետք է ապահովագրական հատուցում վճարեր պատշաճ ապահովագրության դեպքում:

3. Գումարները, որոնք անձն անհիմն խնայել է՝ չկատարելով կամ անպատշաճ կատարելով իր վրա դրված պարտադիր ապահովագրության պարտականությունը, ենթակա են բռնագանձման հոգուտ Հայաստանի Հանրապետության՝ դրանց վրա տոկոսներ հաշվեգրելով սույն օրենսգրքի 411 հոդվածին համապատասխան:

Հոդված 994. Ապահովագրողներ

1. Որպես ապահովագրողներ՝ ապահովագրության պայմանագրեր կարող են կնքել համապատասխան տեսակի ապահովագրության իրականացման համար թույլտվություն (լիցենզիա) ունեցող իրավաբանական անձինք:

2. Այն պահանջները, որոնց պետք է համապատասխանեն ապահովագրական կազմակերպությունները, դրանց գործունեության լիցենզավորման և այդ գործունեության նկատմամբ պետական հսկողության իրականացման կարգը սահմանվում է ապահովագրության մասին օրենքներով:

Հոդված 995. Ապահովագրվողի և շահառուի կողմից ապահովագրության պայմանագրով սահմանված պարտականությունների կատարումը

1. Հօգուտ շահառուի ապահովագրության պայմանագիր կնքելը՝ ներառյալ և այն դեպքում, երբ նա ապահովագրված անձն է, ապահովագրվողին չի ազատում այդ պայմանագրով պարտականությունները կատարելուց, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով կամ ապահովագրվողի պարտականությունները կատարել է այն անձը, ում օգտին կնքվել է պայմանագիրը:

2. Ապահովագրողն իրավունք ունի շահառուից՝ ներառյալ այն դեպքում, երբ շահառուն ապահովագրված անձն է, պահանջել ապահովագրության պայմանագրով

պարտականությունների՝ ներառյալ ապահովագրվողի վրա դրված պարտականությունների կատարում, որոնք նա չի կատարել, երբ շահառուն գույքային ապահովագրության պայմանագրով ապահովագրական հատուցում կամ անձնական ապահովագրության պայմանագրով ապահովագրական գումար վճարելու մասին պահանջ է ներկայացրել: Պարտականությունները, որոնք պետք է նախապես կատարված լինեին, չկատարելու կամ դրանք ժամանակին չկատարելու հետևանքների ռիսկը կրում է շահառուն:

Հոդված 996. Ապահովագրության պայմանագրի ձևը

1. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է գրավոր: Գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է ապահովագրության պայմանագրի անվավերության: Այդպիսի պայմանագիրն առոչինչ է:
2. Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել մեկ փաստաթուղթ կազմելու (450 հոդվածի 3-րդ կետ) կամ ապահովագրողի կողմից ապահովագրվողին, նրա գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա իր ստորագրությամբ ապահովագրական պոլիս (վկայական, հավաստագիր, անդորրագիր) հանձնելու միջոցով: Ապահովագրողի առաջարկած պայմաններով պայմանագիր կնքելը հավաստվում է սույն կետի առաջին պարբերությունում նշված փաստաթղթին ապահովագրողից ընդունելով:
3. Ապահովագրողն ապահովագրության պայմանագիրը կնքելիս իրավունք ունի ապահովագրության առանձին տեսակների համար կիրառել իր կամ ապահովագրողների միության կողմից մշակված պայմանագրի (ապահովագրական պոլիսի) ստանդարտ ձևեր:

Հոդված 997. Ապահովագրությունը գլխավոր պոլիսով

1. Միասեռ գույքի (ապրանքներ, բեռներ և այլն) տարբեր խմբաքանակների պարբերաբար ապահովագրությունն ապահովագրողի հետ որոշակի ժամանակահատվածի ընթացքում և միանման պայմաններով կարող է ապահովագրողի և ապահովագրվողի համաձայնությամբ իրականացվել մեկ ապահովագրության պայմանագրի՝ գլխավոր պոլիսի միջոցով:
2. Ապահովագրվողը պարտավոր է գլխավոր պոլիսի գործողության ներքո ընկնող գույքի յուրաքանչյուր խմբաքանակի վերաբերյալ ապահովագրողին, վերջինիս կողմից նախատեսված ժամկետում, իսկ եթե ժամկետ նախատեսված չէ՝ դրանք ստանալիս անհապաղ, հայտնել այդպիսի պոլիսով պայմանավորված տեղեկությունները: Ապահովագրվողը չի ազատվում այդ պարտականությունից նույնիսկ այն դեպքում, երբ այդ տեղեկությունների ստացման պահին ապահովագրողի կողմից վնասների հատուցման անհրաժեշտությունն արդեն վերացել է:
3. Ապահովագրվողի պահանջով ապահովագրողը պարտավոր է ապահովագրական պոլիսներ տալ գլխավոր պոլիսի գործողության ներքո ընկնող գույքի առանձին խմբաքանակների վերաբերյալ:
4. Ապահովագրական պոլիսը գլխավոր պոլիսին չհամապատասխանելու դեպքում նախապատվությունը տրվում է ապահովագրական պոլիսին:

Հոդված 998. Ապահովագրության պայմանագրի էական պայմանները

1. Գույքի ապահովագրության պայմանագիր կնքելիս ապահովագրվողի և ապահովագրողի միջև պետք է համաձայնություն ձեռք բերվի՝
 - 1) ապահովագրության օբյեկտ հանդիսացող որոշակի գույքի կամ այլ գույքային շահի վերաբերյալ.
 - 2) այն իրադարձության բնույթի վերաբերյալ, որի վրա հասնելու դեպքում իրականացվում է ապահովագրությունը (ապահովագրական դեպք).
 - 3) ապահովագրական գումարի չափի մասին.
 - 4) պայմանագրի գործողության ժամկետի մասին:

2. Անձնական ապահովագրության պայմանագիր կնքելիս ապահովագրվողի և ապահովագրողի միջև պետք է համաձայնություն ձեռք բերվի՝

- 1) ապահովագրված անձի վերաբերյալ.
- 2) ապահովագրված անձի կյանքում այն իրադարձության բնույթի վերաբերյալ, որի վրա հասնելու դեպքում իրականացվում է ապահովագրությունը (ապահովագրական դեպք).
- 3) ապահովագրական գումարի չափի վերաբերյալ.
- 4) պայմանագրի գործողության ժամկետի վերաբերյալ:

Հոդված 999. Ապահովագրության պայմանագրի պայմաններն ապահովագրության կանոններով որոշելը

1. Պայմանները, որոնցով կնքվում է ապահովագրության պայմանագիրը, կարող են որոշվել ապահովագրողի կամ ապահովագրողների միության ընդունած կամ հաստատած ապահովագրության համապատասխան տեսակի ստանդարտ կանոններով (ապահովագրության կանոններով):

2. Ապահովագրության կանոններում պարունակվող և ապահովագրության պայմանագրի (ապահովագրական պոլիսի) մեջ չընդգրկված պայմանները պարտադիր են ապահովագրվողի (շահառուի) համար, եթե պայմանագրում (ապահովագրական պոլիսում) ուղղակի վկայակոչված է նման կանոնների կիրառումը և այդ պայմանները շարադրված են պայմանագրի (ապահովագրական պոլիսի) հետ նույն փաստաթղթում կամ դրա հակառակ երեսին կամ կցված են դրան: Վերջին դեպքում պայմանագիր կնքելիս ապահովագրական պայմանների հանձնումն ապահովագրվողին պետք է հավաստվի պայմանագրի մեջ կատարվող գրառմամբ:

3. Ապահովագրության պայմանագիր կնքելիս ապահովագրվողը և ապահովագրողը կարող են պայմանավորվել ապահովագրության կանոնների առանձին դրույթներ փոփոխելու կամ վերացնելու և լրացնելու վերաբերյալ:

4. Ապահովագրվողը (շահառուն) իր շահերի պաշտպանության համար իրավունք ունի վկայակոչել ապահովագրության համապատասխան տեսակի կանոնները, որոնք նշված են ապահովագրության պայմանագրում (ապահովագրության պոլիսում), եթե անգամ սույն հոդվածի ուժով այդ կանոնները պարտադիր չեն նրա համար:

Հոդված 1000. Ապահովագրության պայմանագիրը կնքելիս ապահովագրվողի կողմից տրամադրվող տեղեկությունները

1. Ապահովագրության պայմանագիրը կնքելիս ապահովագրվողը պարտավոր է ապահովագրողին տեղեկություններ հայտնել ապահովագրական դեպքի վրա հասնելու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը (ապահովագրական ռիսկը) որոշելու համար էական նշանակություն ունեցող ապահովագրվողին հայտնի հանգամանքների երևան գալու հավանականության մասին, եթե այդ հանգամանքները հայտնի չեն և չէին կարող հայտնի լինել ապահովագրողին:

2. Էական են ճանաչվում ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանագրի (ապահովագրական պոլիսի) ստանդարտ ձևի կամ նրա գրավոր հարցման մեջ որոշակիորեն վերապահված հանգամանքները:

3. Եթե ապահովագրության պայմանագիրը կնքվել է ապահովագրողի որոշակի հարցերին ապահովագրվողի պատասխանների բացակայությամբ, ապահովագրողը չի կարող հետագայում պահանջել լուծելու պայմանագիրը կամ այն անվավեր ճանաչելու՝ վկայակոչելով ապահովագրվողի կողմից համապատասխան հանգամանքները չհայտնելու փաստը:

4. Եթե ապահովագրության պայմանագիրը կնքելուց հետո պարզվել է, որ ապահովագրվողը սույն հոդվածի 1-ին կետում նշված հանգամանքների մասին ապահովագրողին հայտնել է ակնհայտ սուտ տեղեկություններ, ապահովագրողն

իրավունք ունի պահանջել անվավեր ճանաչելու պայմանագիրը և կիրառելու սույն օրենսգրքի 313 հոդվածի 2-րդ կետում նախատեսված հետևանքները:

5. Ապահովագրողը չի կարող պահանջել անվավեր ճանաչելու պայմանագիրը, եթե հանգամանքները, որոնց մասին ապահովագրվողը լռել է, արդեն վերացել են:

Հոդված 1001. Ապահովագրողի՝ ապահովագրական ռիսկը գնահատելու իրավունքը

1. Գույքի ապահովագրության պայմանագիր կնքելիս ապահովագրողն իրավունք ունի ապահովագրվողի գույքը զննել, իսկ անհրաժեշտության դեպքում նշանակել փորձաքննություն՝ դրա իրական արժեքը պարզելու նպատակով:

2. Անձնական ապահովագրության պայմանագիր կնքելիս ապահովագրողն իրավունք ունի կատարել ապահովագրվող անձի բժշկական քննություն՝ նրա փաստացի առողջական վիճակը պարզելու համար:

3. Սույն հոդվածի հիմքով՝ ապահովագրողի կողմից ապահովագրական ռիսկը գնահատելը պարտադիր չէ ապահովագրվողի համար, որն իրավունք ունի ապացուցել հակառակը:

Հոդված 1002. Ապահովագրության գաղտնիությունը

Ապահովագրողն իրավունք չունի հրապարակել իր մասնագիտական գործունեության արդյունքում ապահովագրվողի, ապահովագրվածի և շահառուի, նրանց առողջական վիճակի, ինչպես նաև գույքային դրության մասին ստացած տեղեկությունները: Ապահովագրողը, ապահովագրության գաղտնիությունը խախտելու համար, կախված՝ խախտված իրավունքների տեսակից և (կամ) դրանց խախտման բնույթից, պատասխանատվություն է կրում սույն օրենսգրքի 141 կամ 162 հոդվածներով նախատեսված կանոններին համապատասխան:

Հոդված 1003. Ապահովագրական գումարը

1. Գումարը, որի շրջանակներում ապահովագրողը գույքային ապահովագրության պայմանագրով պարտավորվում է ապահովագրական հատուցում վճարել, կամ որը նա պարտավորվում է վճարել անձնական ապահովագրության պայմանագրով (ապահովագրական գումարը), որոշվում է ապահովագրվողի և ապահովագրողի համաձայնությամբ՝ սույն հոդվածով նախատեսված կանոններին համապատասխան:

2. Գույքը կամ ձեռնարկատիրական ռիսկն ապահովագրելու դեպքում ապահովագրական գումարը չպետք է գերազանցի դրա իրական արժեքը (ապահովագրական արժեքը): Այդպիսի արժեք են՝

1) գույքի համար՝ ապահովագրության պայմանագիրը կնքելու օրը դրա գտնվելու վայրում գույքի իրական գինը.

2) ձեռնարկատիրական ռիսկի համար՝ ձեռնարկատիրական գործունեության վնասները, որոնք ապահովագրվողը կարող էր կրել ապահովագրական դեպքը վրա հասնելիս:

3. Անձնական ապահովագրության և քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության պայմանագրերում ապահովագրական գումարը որոշվում է կողմերի հայեցողությամբ:

Հոդված 1004. Գույքի ապահովագրական արժեքը վիճարկելու անթույլատրելիությունը

Ապահովագրության պայմանագրում նշված գույքի ապահովագրական արժեքը հետագայում չի կարող վիճարկվել, բացառությամբ այն դեպքի, երբ մինչև պայմանագիր կնքելն ապահովագրական ռիսկը գնահատելու իր իրավունքից չօգտված ապահովագրողն (1001 հոդվածի 1-ին կետ) այդ արժեքի վերաբերյալ դիտավորյալ դրվել է մոլորության մեջ:

Հոդված 1005. Ոչ լրիվ գույքային ապահովագրություն

1. Եթե գույքի կամ ձեռնարկատիրական ռիսկի ապահովագրության պայմանագրում ապահովագրական գումարը սահմանվել է ապահովագրական արժեքից ցածր, ապահովագրողն ապահովագրական դեպքը վրա հասնելիս պարտավոր է ապահովագրվողին (շահառուին) հատուցել վերջինիս կրած վնասների մի մասը՝ ապահովագրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարին համամասնական չափով:

2. Պայմանագրով կարող է նախատեսվել ապահովագրական հատուցման առավել բարձր, սակայն ապահովագրական արժեքից ոչ ավելի չափ:

Հոդված 1006. Լրացուցիչ գույքային ապահովագրություն

1. Այն դեպքում, երբ գույքը կամ ձեռնարկատիրական ռիսկն ապահովագրվել է ապահովագրական արժեքի մի մասով, ապահովագրվողը (շահառուն) իրավունք ունի իրականացնել լրացուցիչ ապահովագրություն՝ ներառյալ այլ ապահովագրողի մոտ, սակայն այն չափով, որպեսզի ընդհանուր ապահովագրական գումարը բոլոր ապահովագրական պայմանագրերով չգերազանցի ապահովագրական արժեքը:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չպահպանելը հանգեցնում է սույն օրենսգրքի 1007 հոդվածի 4-րդ կետով նախատեսված հետևանքներին:

Հոդված 1007. Ապահովագրական արժեքը գերազանցող ապահովագրության հետևանքները

1. Եթե գույքի կամ ձեռնարկատիրական ռիսկի ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրական գումարը գերազանցել է ապահովագրական արժեքը, պայմանագիրը՝ ապահովագրական գումարի այն մասով, որը գերազանցում է ապահովագրական արժեքը, առջինն է:

Այդ դեպքում ապահովագրական պարգևի հավելյալ վճարված մասը չի վերադարձվում:

2. Եթե ապահովագրության պայմանագրին համապատասխան՝ ապահովագրական պարգևը վճարվում է տարածամկետ և մինչև սույն հոդվածի 1-ին կետում նշված հանգամանքները պարզելու պահին այն լրիվ չի վճարվել, մնացած ապահովագրական վճարները պետք է կատարվեն ապահովագրական գումարի նվազեցված չափին համամասնորեն պակասեցված չափով:

3. Եթե ապահովագրության պայմանագրում ապահովագրական գումարի ավելացումն ապահովագրվողի խաբեության հետևանքն է, ապահովագրողն իրավունք ունի պահանջել անվավեր ճանաչելու պայմանագիրը և հատուցելու իրեն պատճառված վնասները՝ ապահովագրվողից ստացած ապահովագրական պարգևի գումարը գերազանցող չափով:

4. Սույն հոդվածի 1-3-րդ կետերով նախատեսված կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքում, երբ ապահովագրական գումարը գերազանցել է ապահովագրական արժեքը՝ երկու կամ մի քանի ապահովագրողների մոտ միևնույն օբյեկտն ապահովագրելու արդյունքում (կրկնակի ապահովագրություն):

Այդ դեպքում յուրաքանչյուր ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման ենթակա գումարը կրճատվում է համապատասխան ապահովագրության պայմանագրի սկզբնական ապահովագրական գումարի նվազեցմանը համամասնորեն:

Հոդված 1008. Գույքային ապահովագրությունը տարբեր ապահովագրական ռիսկերից

1. Գույքը և ձեռնարկատիրական ռիսկը կարող են ապահովագրվել տարբեր ապահովագրական ռիսկերից, ինչպես նույն, այնպես էլ առանձին ապահովագրության պայմանագրով՝ ներառյալ տարբեր ապահովագրողների հետ կնքված պայմանագրերով:

Այդ դեպքերում թույլատրվում է բոլոր պայմանագրերով նախատեսված ընդհանուր ապահովագրական գումարի չափի գերազանցում ապահովագրական արժեքից:

2. Եթե սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան կնքված երկու կամ մի քանի պայմանագրերից բխում է միևնույն ապահովագրական դեպքով վրա հասած միևնույն հետևանքների համար ապահովագրական հատուցում վճարելու ապահովագրողների պարտականությունը, նման պայմանագրերի նկատմամբ համապատասխան մասով կիրառվում են սույն օրենսգրքի 1007 հոդվածի 4-րդ կետով նախատեսված կանոնները:

Հոդված 1009. Համաապահովագրություն

Ապահովագրության օբյեկտը կարող է ապահովագրվել մեկ ապահովագրության պայմանագրով մի քանի ապահովագրողների կողմից համատեղ (համաապահովագրություն): Եթե այդպիսի պայմանագրում որոշված չեն ապահովագրողներից յուրաքանչյուրի իրավունքները և պարտականությունները, նրանք ապահովագրվողի (շահառուի) առջև համապարտ պատասխանատվություն են կրում գույքային ապահովագրության պայմանագրով ապահովագրական հատուցում կամ անձնական ապահովագրության պայմանագրով ապահովագրական գումար վճարելու համար:

Հոդված 1010. Ապահովագրական պարզ և ապահովագրական մուծումներ

1. Ապահովագրական պարզ է համարվում ապահովագրության համար վճարը, որը ապահովագրվողը (շահառուն) պարտավոր է ապահովագրողին մուծել ապահովագրության պայմանագրում սահմանված կարգով և ժամկետներում:

2. Ապահովագրության պայմանագրով վճարման ենթակա ապահովագրական պարզի չափը որոշելիս ապահովագրողը, հաշվի առնելով ապահովագրական օբյեկտի և ապահովագրական ռիսկի բնույթը, իրավունք ունի կիրառել ապահովագրական գումարի միավորից գանձվող պարզերը որոշող՝ իր կողմից մշակված ապահովագրական դրույքաչափեր:

Օրենքով նախատեսված դեպքերում ապահովագրական պարզի չափը որոշվում է ապահովագրական հսկողության պետական մարմինների սահմանած կամ կարգավորվող ապահովագրական դրույքաչափերին համապատասխան:

3. Եթե ապահովագրության պայմանագրով նախատեսված է ապահովագրական պարզեր վճարել, տարաժամկետ պայմանագրով կարող են սահմանվել որոշված ժամկետներում հերթական ապահովագրական վճարներ չկատարելու հետևանքները:

4. Եթե ապահովագրական դեպքը վրա է հասել մինչև հերթական ապահովագրական վճարը, որը կետանցվել է, ապահովագրողն իրավունք ունի գույքային ապահովագրության պայմանագրով ապահովագրական հատուցման կամ անձնական ապահովագրության պայմանագրով ապահովագրական գումարի վճարման ենթակա չափը որոշելիս հաշվանցել կետանցված ապահովագրական վճարի գումարը:

Հոդված 1011. Ապահովագրված անձին փոխարինելը

1. Այն դեպքում, երբ վնաս պատճառելու համար պատասխանատվության ռիսկի ապահովագրության պայմանագրով (հոդված 987) ապահովագրված է ոչ թե ապահովագրվողի, այլ ուրիշ անձի պատասխանատվությունը, ապահովագրվողն իրավունք ունի, մինչև ապահովագրական դեպքի վրա հասնելը, ցանկացած ժամանակ այդ անձին փոխարինել այլ անձով՝ այդ մասին գրավոր ծանուցելով ապահովագրողին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

2. Անձնական ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրված անձը կարող է ապահովագրվողի կողմից այլ անձով փոխարինվել միայն ապահովագրվածի և ապահովագրողի համաձայնությամբ:

Հոդված 1012. Շահառուին փոխարինելը

1. Ապահովագրվողն իրավունք ունի ապահովագրության պայմանագրում նշված շահառուին փոխարինել ուրիշ անձով՝ այդ մասին գրավոր ծանուցելով ապահովագրողին: Անձնական ապահովագրության պայմանագրով՝ ապահովագրված անձի համաձայնությամբ նշանակված շահառուին թույլատրվում է փոխարինել (990 հոդվածի 2-րդ և 3-րդ կետեր) միայն ապահովագրված անձի համաձայնությամբ:

2. Շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով այն բանից հետո, երբ նա ապահովագրության պայմանագրով կատարել է որևէ պարտականություն կամ ապահովագրողին պահանջ է ներկայացրել ապահովագրական հատուցում կամ ապահովագրական գումար ստանալու մասին:

Հոդված 1013. Ապահովագրության պայմանագրի գործողության սկիզբը

1. Ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում ապահովագրական պարզևր կամ դրա առաջին վճարը մուծելու պահին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրում:

2. Ապահովագրության պայմանագրով պայմանավորված ապահովագրությունը տարածվում է ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո տեղի ունեցած ապահովագրական դեպքերի վրա, եթե ապահովագրության գործողության սկզբի այլ ժամկետ նախատեսված չէ պայմանագրում:

Հոդված 1014. Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարելը

1. Ապահովագրության պայմանագիրը վաղաժամկետ դադարում է, եթե դրա ուժի մեջ մտնելուց հետո վերացել է ապահովագրական դեպքի վրա հասնելու հնարավորությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ապահովագրական դեպքից տարբեր այլ հանգամանքների բերումով: Նման հանգամանքներ են, մասնավորապես՝

1) ապահովագրված գույքի ոչնչանալն ապահովագրական դեպքի վրա հասնելուց տարբեր պատճառներով.

2) ձեռնարկատիրական ռիսկը կամ քաղաքացիական պատասխանատվության ռիսկն ապահովագրված անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությունը սահմանված կարգով դադարեցնելը:

2. Ապահովագրվողը (շահառուն) ցանկացած ժամանակ իրավունք ունի հրաժարվել ապահովագրության պայմանագրից, եթե հրաժարվելու պահին, սույն հոդվածի 1-ին կետում նշված հանգամանքներով, ապահովագրական դեպքի վրա հասնելու հնարավորությունը չի վերացվել:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված հանգամանքներով ապահովագրության պայմանագիրը վաղաժամկետ դադարելիս ապահովագրողն իրավունք ունի ապահովագրական պարզևի մի մասի նկատմամբ՝ այն ժամանակին համամասնորեն, որի ընթացքում գործել է ապահովագրությունը:

Ապահովագրվողի (շահառուի) կողմից ապահովագրական պայմանագրից վաղաժամկետ հրաժարվելու դեպքում ապահովագրողին վճարված ապահովագրական պարզևր չի վերադարձվում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Հոդված 1015. Ապահովագրական պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրական ռիսկը մեծանալու հետևանքները

1. Գույքային ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրվողը (շահառուն) պարտավոր է ապահովագրողին անհապաղ հայտնել պայմանագիրը կնքելիս ապահովագրողին հայտնած հանգամանքների իրեն հայտնի դարձած փոփոխությունների մասին, եթե այդ փոփոխությունները կարող են որակապես ազդել ապահովագրական ռիսկի մեծանալու վրա:

Բոլոր դեպքերում էական են համարվում ապահովագրության պայմանագրում (ապահովագրական պոլիսում) և ապահովագրվողին տրված ապահովագրական կանոններում վերապահված փոփոխությունները:

2. Ապահովագրական ռիսկի մեծացումն առաջացնող հանգամանքների մասին տեղեկացված ապահովագրողն իրավունք ունի պահանջել փոփոխելու ապահովագրության պայմանագրի պայմանները կամ վճարելու ռիսկի մեծանալուն համաչափ լրացուցիչ ապահովագրական պարգև:

Եթե ապահովագրվողը (շահառուն) առարկում է ապահովագրության պայմանագրի պայմանները փոփոխվելու կամ ապահովագրական պարգևի հավելավճարի դեմ, ապահովագրողը, սույն օրենսգրքի 30 գլխի կանոններին համապատասխան, իրավունք ունի պահանջել լուծելու պայմանագիրը:

3. Ապահովագրվողի կամ շահառուի կողմից սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված պարտականությունները չկատարելու դեպքում ապահովագրողն իրավունք ունի պահանջել լուծելու ապահովագրության պայմանագիրը և հատուցելու պայմանագրի լուծմամբ պատճառված վնասները (469 հոդվածի 5-րդ կետ):

4. Ապահովագրողն իրավունք չունի պահանջել լուծելու պայմանագիրը, եթե արդեն վերացել են ապահովագրական ռիսկի մեծացումն առաջացնող հանգամանքները:

5. Անձնական ապահովագրության դեպքում ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերում նշված ապահովագրական ռիսկը փոփոխելու հետևանքները կարող են վրա հասնել, եթե դրանք ուղղակի նախատեսված են պայմանագրով:

Հոդված 1016. Ապահովագրված գույքի նկատմամբ իրավունքներն այլ անձի փոխանցելը

1. Ապահովագրված գույքի նկատմամբ իրավունքներն այն անձից, ում օգտին կնքվել էր ապահովագրության պայմանագիրը, մեկ այլ անձի փոխանցելու դեպքում, այդ պայմանագրով իրավունքները և պարտականությունները փոխանցվում են այն անձին, ում փոխանցվել են գույքի նկատմամբ իրավունքները, բացառությամբ սույն օրենսգրքի 279 հոդվածի 2-րդ կետում նշված հիմքերով գույքն առգրավելու և դրա նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու (հոդված 280) դեպքերի:

2. Անձը, ում փոխանցվել են ապահովագրված գույքի նկատմամբ իրավունքները, պետք է այդ մասին անհապաղ գրավոր ծանուցի ապահովագրողին:

Հոդված 1017. Ապահովագրական դեպքը վրա հասնելու մասին ապահովագրողին ծանուցելը

1. Գույքային ապահովագրության պայմանագրով՝ ապահովագրվողը, ապահովագրական դեպքի վրա հասնելն իրեն հայտնի դառնալուց հետո, պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին: Եթե պայմանագրով նախատեսված է ծանուցման ժամկետ և (կամ) եղանակ, դա պետք է արվի սահմանված ժամկետում ու պայմանագրում նշված եղանակով:

Նման պարտականություն կրում է նաև շահառուն, որը տեղյակ է իր օգտին ապահովագրական պայմանագրի կնքված լինելու մասին, եթե նա մտադիր է օգտվել ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից:

2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված պարտականությունը չկատարելու դեպքում ապահովագրողն իրավունք ունի չվճարել ապահովագրական հատուցումը, եթե չապացուցվի, որ նա ժամանակին իմացել է ապահովագրական դեպքի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված կանոնները համապատասխանաբար կիրառվում են անձնական ապահովագրության պայմանագրի նկատմամբ, եթե ապահովագրական դեպք է ապահովագրված անձի մահը կամ նրա

առողջությանը պատճառված վնասը: Այդ դեպքում ապահովագրողին ծանուցելու համար պայմանագրով սահմանված ժամկետը չի կարող պակաս լինել երեսուն օրվանից:

Հոդված 1018. Ապահովագրական դեպքից առաջացած վնասները նվազեցնելը

1. Գույքային ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական դեպքը վրա հասնելիս ապահովագրվողը պարտավոր է ողջամիտ և մատչելի միջոցներ ձեռնարկել հնարավոր վնասները նվազեցնելու համար:

Ապահովագրվողը նման միջոցներ կիրառելիս պետք է հետևի ապահովագրողի ցուցումներին, եթե դրանց մասին հայտնվել է ապահովագրվողին:

2. Հատուցման ենթակա վնասները նվազեցնելու նպատակով ապահովագրողի կատարած ծախսերը, եթե այդպիսիք անհրաժեշտ են եղել կամ կատարվել են ապահովագրողի ցուցումներին համապատասխան, հատուցվում են ապահովագրողի կողմից նույնիսկ այն դեպքում, երբ համապատասխան միջոցներն արդյունավետ չեն եղել:

Նման ծախսերը հատուցվում են ապահովագրական գումարին ապահովագրական արժեքի հարաբերությանը համամասնորեն, անկախ այն բանից, որ դրանք, այլ վնասների հատուցման հետ միասին, կարող են գերազանցել ապահովագրական գումարը:

3. Ապահովագրողն ազատվում է ապահովագրվողի կողմից հնարավոր վնասները նվազեցնելու համար իրեն մատչելի ողջամիտ միջոցները դիտավորյալ չձեռնարկելու հետևանքով առաջացած վնասները հատուցելուց:

Հոդված 1019. Ապահովագրվողի, շահառուի կամ ապահովագրված անձի մեղքով ապահովագրական դեպքը վրա հասնելու հետևանքները

1. Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում կամ ապահովագրական գումար վճարելուց, եթե ապահովագրական դեպքը վրա է հասել ապահովագրվողի, շահառուի կամ ապահովագրված անձի դիտավորության հետևանքով, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի:

2. Ապահովագրողը չի ազատվում կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության պայմանագրով ապահովագրական հատուցում վճարելուց, եթե վնասը պատճառվել է դրա համար պատասխանատու անձի մեղքով:

3. Ապահովագրողը չի ազատվում ապահովագրական գումար վճարելուց, որն անձնական ապահովագրության պայմանագրով վճարվում է ապահովագրված անձի մահվան դեպքում, եթե վերջինս ինքնասպան է եղել և ինքնասպանության պահին ապահովագրական պայմանագիրն առնվազն երեք տարի գործել է:

Հոդված 1020. Ապահովագրական հատուցում և ապահովագրական գումար վճարելուց ապահովագրողին ազատելու հիմքերը

1. Եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ ապահովագրության պայմանագրով, ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում և ապահովագրական գումար վճարելուց, եթե ապահովագրական դեպքը վրա է հասել որպես հետևանք՝

1) միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ներգործության:

2) ռազմական գործողությունների, ինչպես նաև զորաշարժերի կամ այլ ռազմական միջոցառումների:

3) քաղաքացիական պատերազմի, ամեն տեսակի հասարակական հուզումների կամ գործադուլների:

2. Ապահովագրողն ազատվում է ապահովագրված գույքը պետական մարմինների կարգադրությամբ առգրավելու, բռնագրավելու, ռեկվիզիցիայի, դրա վրա արգելանք դնելու կամ այն ոչնչացնելու հետևանքով առաջացած վնասների համար ապահովագրական

հատուցում վճարելուց, եթե այլ բան նախատեսված չէ գույքային ապահովագրության պայմանագրով:

***Հոդված 1021. Վնասի հատուցման իրավունքն ապահովագրվողից
ապահովագրողին անցնելը (սուրբոգացիա)***

1. Ապահովագրական հատուցումը վճարած ապահովագրողին է անցնում վճարված գումարի շրջանակներում պահանջի իրավունքը, որն ապահովագրվողն (շահառուն) ունի ապահովագրության արդյունքում հատուցված վնասի համար պատասխանատու անձի նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ գույքային ապահովագրության պայմանագրով: Դիտավորյալ վնաս պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունքն ապահովագրողին անցնելը բացառող պայմանագրի պայմանն առոչինչ է:

2. Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է ապահովագրվողի (շահառուի) և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:

3. Ապահովագրվողը (շահառուն) պարտավոր է ապահովագրողին հանձնել փաստաթղթեր և ապացույցներ ու հայտնել ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:

4. Եթե ապահովագրվողը (շահառուն) հրաժարվել է ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել ապահովագրվողի (շահառուի) մեղքով, ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջել վերադարձնելու ավելորդ վճարված հատուցման գումարը:

***Հոդված 1022. Հայցային վաղեմությունը գույքային ապահովագրության հետ
կապված պահանջներով***

Գույքային ապահովագրության պայմանագրից բխող պահանջներով հայցը կարող է ներկայացվել երկու տարվա ընթացքում:

Հոդված 1023. Վերաապահովագրություն

1. Ապահովագրության պայմանագրով ապահովագրողի կողմից իր վրա վերցրած ապահովագրական հատուցում կամ ապահովագրական գումար վճարելու ռիսկը լրիվ կամ մասնակիորեն կարող է ապահովագրվել այլ ապահովագրողի (ապահովագրողների) մոտ վերջինիս հետ կնքված վերաապահովագրության պայմանագրով:

2. Վերաապահովագրության պայմանագրի նկատմամբ կիրառվում են սույն գլխով սահմանված՝ ձեռնարկատիրական ռիսկի ապահովագրության կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ վերաապահովագրության պայմանագրով: Ապահովագրության պայմանագրով (հիմնական պայմանագրով) վերաապահովագրության պայմանագիր կնքած ապահովագրողը վերաապահովագրության պայմանագրում ապահովագրվող է:

3. Վերաապահովագրության դեպքում ապահովագրության հիմնական պայմանագրով ապահովագրական հատուցում կամ ապահովագրական գումար վճարելու համար ապահովագրվողի առջև պատասխանատվություն է կրում այդ պայմանագրով ապահովագրողը:

4. Թույլատրվում է հերթականությամբ կնքել երկու կամ մի քանի վերաապահովագրության պայմանագրեր:

Հոդված 1024. Պարտադիր պետական ապահովագրություն

1. Քաղաքացիների սոցիալական շահերի և պետության շահերի ապահովման նպատակով՝ օրենքով կարող է սահմանվել որոշակի կատեգորիայի պետական ծառայողների կյանքի, առողջության ու գույքի պարտադիր պետական ապահովագրություն:

Պարտադիր պետական ապահովագրությունն իրականացվում է նախարարություններին և գործադիր իշխանության այլ մարմիններին (ապահովագրվողներին)՝ այդ նպատակներով պետական բյուջեից տրամադրվող միջոցների հաշվին:

2. Պարտադիր պետական ապահովագրությունն իրականացվում է ապահովագրության պայմանագրի հիման վրա այդպիսի ապահովագրության մասին օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան:

3. Պարտադիր պետական ապահովագրությունը վճարվում է ապահովագրողներին այդպիսի ապահովագրության մասին օրենքով և այլ իրավական ակտերով որոշված չափերով:

4. Սույն գլխով նախատեսված կանոնները կիրառվում են պարտադիր պետական ապահովագրության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ այդպիսի ապահովագրության մասին օրենքներով կամ այլ իրավական ակտերով և չի բխում համապատասխան ապահովագրական հարաբերությունների էությունից:

***Հոդված 1025. Ապահովագրության ընդհանուր կանոնների կիրառումն
ապահովագրության հատուկ տեսակների նկատմամբ***

Սույն գլխով նախատեսված կանոնները կիրառվում են ոչ առևտրային ռիսկերից արտասահմանյան ներդրումների ապահովագրման հարաբերությունների, բժշկական ապահովագրության, բանկային ավանդների ապահովագրության, կենսաթոշակների ապահովագրության, ինչպես նաև ապահովագրության այլ տեսակների նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ այդ տեսակների ապահովագրությունների մասին օրենքներով: